



ԱՄԱՆՈՐՅԱ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

1990 թվականի դեկտեմբերի 31-ն է:

Գեղեցիկ ավանդությամբ, Ամենայն Հայոց Հայրապետի նախագահությամբ, շքեղորեն զարդարված միաբանական սեղանատանը հավաքված են Մայր Աթոռի ողջ միաբանությունը, հոգևորականներ՝ տարբեր վանքերից ու եկեղեցիներից, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, հոգեվոր ճեմարանի ուսանողությունը, դասախոսական կազմը և Մայրավանքի պաշտոնեությունը, հրաժեշտ տալու անցնող տարվան և լավագույն տրամադրություններով, նոր ծրագրերով ու նոր իրագործումներով դիմավորելու Նոր տարին:

Ահավասիկ այս հույսով ու լավատեսությամբ էլ ներկաները միաբերան արտասանում են «Հայր մեր» աղոթքը: Նորին Սրբությունը օրհնում է բարիքներով լի սեղանը:

Հնչում է ճեմարանի քայլերգը, որից հետո հանդիսավոր երեկոյի բացման ու շնորհավորանքի խոսքով հանդես է գալիս ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող գերաշնորհ Տ. Ծառե արքեպիսկոպոս Աճեմյանը:

«Վեհափառ Տեր միաբանակից եղբայրներ, սիրելի սաներ և հյուրեր: Խոր ապրում մը կանցնի սրտես այս պահուն. առաջին անգամ է, որ Մայր Աթոռիս մեջ կվերջացնեմ տարի մը և դիմացս կբացվի նորը: Կարծեք վարժված էի Երուսաղեմ անցնել Նոր տարին, և այնտեղ սուրբ Երկրին մեջ անգամ մը ևս ապրիմ այն առաջին տարին, որ Հիսուս ծնավ Բեթղեհեմի մեջ, երբ հրեշտակները երկինքի վրա երգեցին ու մոգերը նվերներով եկան: Իմ առաջին ըսելիքս պիտի ըլլա, որ այդ սուրբ Երկրին խորհուրդը և ողջույնը բերեմ ձեզի՝ ըսելու համար որ ամեն Նոր տարի մեզի՝ քրիստոնյաներու համար, կրկնությունն է այդ առաջին տարվա, որով մարդկության պատմության մեջ մտավ մեր Տեր Հիսուս Քրիստոս, Աստված մարդացավ և մեզի բերավ դեպի Աստված երթալու ճանապարհը: Սակայն այսօր ավելի խորունկ զգացում մը կանցնի սրտես, և շատ մեծ շնորհք կվայելեմ՝ նստելու Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կողքին և Աթոռիս հարգելի միաբանների մեջ ապրելու այս պահը: Ինչպես Բեթղեհեմ և Երուսաղեմ՝ Հիսուսի ներկայությունը կզգացվի այսօր, այնպես ալ կզգամ կարծեք ներկայությունը այստեղ մեր հայրապետներուն՝ սկսյալ սբ. Գրիգոր Լուսավորիչեն, Մեծն Ներսեսեն, սուրբ Սահակեն, սուրբ Մեսրոպ Մաշտոցեն՝ մինչև այս օրերը:

Ժամանակը հարաբերական հասկացողություն մըն է, կրնա ըլլալ մարդու մը համար միայն շարահարություն մը վայրկյաններու, ժամերու, օրերու, շաբաթներու և տարիներու, որոնք մեզի մը պես կանցնին ու կերթան: Ուրիշներուն համար ժամանակը կարծեք թե ուրիշ տարածք մը ունի, միայն երկարություն մը չէ, այլ նաև լայնություն մը ունի, ուր կխտանան պահերը և կլեցվին դեպքով մը, որ իր հետքը կթողու մեր կյանքին: Մեզի համար, սակայն ժամանակը ունի նաև երրորդ տարածք մը, որ խորությունն է: Այն պահերը, որոնք անհատական են, մերն են, և որոնց մեջ կապրինք այնպիսի խտացած պահ մը, որ մեզի ճաշակը կուտա հավիտենականության: Այդպիսի պահ մը եղած է վստահաբար Պողոս առաքյալի այն վայրկյանը, երբ Դամասկոսի ճամփուն վրա լսեց Տիրոջ ձայնը, այդպիսի պահ մը եղած է անտարակույս, Գրիգոր Լուսավորիչի տեսիլքի այն վայրկյանը, երբ Հիսուս ոսկե մուրճով զարկավ ճիշտ այստեղ Վաղարշապատի այս սուրբ վայրին, այդպիսի պահ մը եղած է անշուշտ՝ Եդեսիո մեջ Մաշտոցի տեսիլքի պահը, որ ոչ միայն իրեն համար հավիտենական պահ մը եղավ, այլ մեր ամբողջ հոգևոր և մշակութային կյանքի համար: Այս գեղեցիկ և հուզիչ առիթով կուգեմ մաղթել, որ այդպիսի անմահական պահերով շարունակե մեր Սրբազան Վեհափառ Հայրապետը լեցնել մեր եկեղեցվո կյանքը, լեցնել ամեն տարի նոր վերածնունդներով, լեցնել ամեն տարի նոր տեսիլքներով, լեցնել ամեն տարի նոր խանդավառություններով, լեցնել ամեն տարի նոր հաղթանակներով, իսկ զինքը շրջապատող միաբանության, Հոգևոր խորհուրդի պատվարժան անդամներուն և մանավանդ ձեզի, բարեշնորհ սարկավազներ և սաներ, ի սրտե կմաղթեմ, որ ներշնչվիք մեր ամբողջ Եկեղեցվո առաջնորդին և մեր Հայրապետին օրհնակեն, և դուք ևս ապրիք իր ապրումներով և ըլլաք շարունակողները իր սրբազան առաքելության:

Ծնորհավոր Նոր տարի բոլորիդ»:

Սրբազան հոր իմաստալից խոսքից հետո, հոգևոր ճեմարանի սաները երգում են «Հինգալա» երգը: Այնուհետև Ա լսարանի ուսանող Գեղամ Մարտիրոսյանը արտասանում է Պարույր Սևակի «Մարդ էլ կա, մարդ էլ» բանաստեղծությունը: Ապա ուսանողության անունից Վեհափառ Հայրապետին ու ներկաներին ողջված շնորհավորական խոսքով հանդես է գալիս Գ լսարանի սան Արթուր Պողոսյանը:

«Վեհափառ Տեր, Գերագույն Հոգևոր Խորհրդի հարգարժան անդամներ, գերաշնորհ սրբազան հայրեր, հոգեշնորհ և արժանապատիվ հայրեր, սիրելի դասախոսներ, ուսանող եղբայրներ և ներկաներ:

Ահա և պատմությունը իր գիրկն է առնում անցնող 1990 թվականը: Այս կամարակապ սրահում կրկին յուրաքանչյուրիս համար ներհայեցողության մի պահ է եկել՝ ակնարկ ձգելու անցնող տարվա վրա:

Անցնող տարին մեզ համար եղավ ուսումնառության մի լուրջ շրջան և զգացինք, որ ևս մեկ տարով առաջանում ենք դեպի կյանքի գիտակցական հանգրվանները: Հասակ առնելով Մայր Աթոռի նվիրյալ միաբանների և հոգևոր ճեմարանի սիրելի դասախոսների ներշնչող միջավայրում, գիտակցում ենք, որ մեր նվիրական պարտքն է՝ հոգևոր կյանքի ծարավի մեր ժողովրդին հաղորդակից դարձնել մեր նախնյաց ոգուն ու հավատին:

Վեհափառ Տեր, թույլ տվեք վստահեցնելու Ձեզ, ամեն մեկս պատրաստակամ է իր անձը ընծայելու, հոգուտ մեր Սուրբ Եկեղեցու և մերազն ժողովրդի:

Թող տարեմուտի այս հանդիսավոր պահը ազդարարը լինի ուսման մեջ առաջիկա մեր աննահանջ աշխատանքի, ամուր հավատքի և հուսադրիչ ապագայի ի պայծառություն հարազատ մեր Եկեղեցվո և նրա հավատավոր զավակների:

Եվս մեկ անգամ ի խորոց սրտի հայցենք մեր աղոթքներում սրբազնագույն Կաթողիկոսին քաջատողջություն, արևաշատ օրեր Լուսավորչի գահի վրա, «Զի անշարժ պահեսցէ սուրբ զխորանն լուսոյ, յորմէ ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»:

Այնուհետև հոգևոր ճեմարանի երգչախմբի կատարմամբ հնչում է «Ով զարմանալի» հոգեհույզ շարականը: Ապա Ա լսարանի ուսանող Էդվարդ Սաֆարյանը ջութակի վրա նվագում է Կոմիտաս վարդապետի «Կոունկ»-ը, «Ախ Վասպուրական» երգի կատարմամբ հանդես է գալիս ճեմարանի քահանայական լսարանի ուսանող Անդրանիկ Մանուկյանը:

Ի դիմաց միաբանության, շնորհավորանքի և բարեմաղթանքի խոսք է ասում Նաթան վրդ. Հովհաննիսյանը.

«Կամոքն Աստուծո նորից հավաքվել ենք այստեղ՝ Մայր Աթոռի միաբանական սեղանատանը, իրար հետ կիսելու Ամանորյա սիրո ճաշը և տոնական ուրախությունը:

Կարծես թե մի սովորական երեկո է, մեր կյանքի անցնող օրերից մեկը: Սակայն այնքան էլ սովորական օր չէ, հավիտենականությունը սահմանների մեջ դնող, ժամանակ կոչվող երկարաձիգ շղթայի մեջ ավելանում է ևս մեկ օղակ՝ մեկ տարի: Ժամանակ, որ Աստված տվել է մեզ այս երկրի վրա՝ «ապաշխարելոյ և գործելոյ զբարիս»: Խոկման և ներհայեցողության գիշեր է այս: Եվ հատկապես այսօր է, երբ բոլորիս հոգու խորքում լսվում է Տիրոջ ձայնը «Տուր զհամար տնտեսութեան քո»: Այսօր մենք բոլորս մտովի թերթում ենք մեր տարեկան հաշվետոմարները, նայում, թե ի՞նչ ենք արել անցնող տարում և ինչպես, ի՞նչ պետք է անեինք և չենք իրագործել, թե որքա՞ն երկնային գանձեր ենք կուտակել Աստուծո արքայության համար: Եվ ըստ այդմ ոտք ենք դնում մեր կյանքի մի նոր փուլ՝ նոր մի տարի, նորանոր ծրագրերով ու երազանքներով՝ գոտեպնդված հույսով և պայծառ ապագայի լուսաբուխ տեսիլքներով:

Վեհափառ Տեր, սիրելի եղբայրներ.

Հնուց ի վեր մարդիկ բարի մի սովորություն ունեն՝ անցնող տարվա ավարտին և նոր տարվա շեմին բարի ցանկություններ ու մաղթանքներ փոխանակելու: Ես ևս, Ամանորի այս երեկոյին ուզում եմ արտահայտել իմ ցանկությունները, և չեմ սխալվի ասել, որ ոչ միայն իմ ցանկությունները, այլև՝ բոլորիս, ողջ միաբանության:

Ցանկանում եմ, որ նոր տարում մեր Մայր Եկեղեցին առավել լցվի Սուրբ Հոգու շնորհներով և նրանից անպակաս լինեն Աստուծո օրհնությունները:

Ցանկանում եմ Նոր տարում տեսնել իրագործումը մեր Փրկչի խոսքերի. «Զի ամենեքին մի իցեն», որպեսզի թե՛ մեր հոգևոր եղբայրության և թե՛ մեր ազգի բոլոր զավակների միջև տիրի սեր և միություն, բարի կամք և համեղբայրության ազնիվ ոգի:

Ամենաջերմ ցանկությունս է, որ մեր հարատև վիշտ ու արցունք տեսած ազգի բոլոր տառապանքները մնան անցյալում, որ մեր երկրային կյանքին ուժ ու ավյուն տվող այս մի բուռ հողը՝ Հայաստան երկիրը, ծաղկի ու բարգավաճի, խնդա ու ցնծա իր բոլոր զավակների հետ միասին:

Մաղթում և աղոթում եմ առ Աստված, որ այնտեղ, ուր հիմա ոռոմբեր են պայթում «Լոնեսցին պատերազմունք, դադարեսցին հարձակմունք թըշնամեաց, և տնկեսցի սեր և արդարութիւն ի յերկրի»։ որպէսզի ամենուրեք մարդիկ կարողանան խաղաղ ապրել ու աշխատել, իսկ մանուկները հանգիստ քնեն իրենց օրորոցներում։

Ի վերջո, Վեհափառ Տեր, թեակոխելով երկրորդ հազարամյակի վերջին տասնամյակը, ցանկանում եմ, որպէսզի մենք բոլորս այսպես միասին, ազգիս Հայրապետիդ՝ մեր սիրելի Վեհափառ Հոր հետ, դիմավորենք գալուստը երրորդ հազարամյակի և մեր Սրբազան Եկեղեցւոյ 1700-ամյակը, և հավաքված Ձերդ Սրբության մյուռոնաբոյր աջով օծված Երևանի սբ. Գրիգոր Լուսավորիչ կաթողիկեում, մեր միասնական գոհության աղոթքն առաքենք առ Տեր՝ երգակցելով երկնայնոցն. «Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն։ Ամէն»։

Հայր սուրբի խոսքից հետո, ճեմարանի Ա լսարանի ուսանող Խորեն Ստեփանյանը ֆլեյտայով նվագում է Կոմիտաս վարդապետի «Կաքավիկ»-ը։ Դանիել Վարուժանի «Նավասարդյան» բանաստեղծությամբ հանդես է գալիս Ա լսարանի սան Գևորգ Կրտիկաշյանը։ Սուրբ Ծննդյան «Լուռ գիշեր» գեղեցիկ երգի կատարմամբ կրկին հանդես է գալիս հոգևոր ճեմարանի երգչախումբը՝ Խորեն Պալյանի ղեկավարությամբ։

Ավանդական «Կաղանդչեքեր»-ից և «Վիճակահանություն»-ից հետո, շնորհավորանքի խոսք է ասում Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պողոսյանը։

«Վեհափառ Տեր, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, սիրելի հոգևոր եղբայրներ և սաներ։

Այս երեկո հուզիչ է, նոր տարվա այս պահուն մեր սրտերը լցվեցին։ Լցվեցին նրա համար, որ մենք հրաժեշտ ենք տալիս 1990 թվականին, թե նրա համար, որ մենք միասին ենք իսկապես նահապետական մի ընտանիք իր նահապետով, իր հայրերով, իր զավակներով և ամբողջ գերդաստանով՝ այս բազմադարյան վանքի կամարների տակ հավաքված՝ դիմավորում ենք գալիքը։ 1990 թվականը այնքան էլ վարդագույն գույներով զօծված, նկարագրված մի տարի չեղավ դժբախտաբար, սակայն, հակառակ այդ բոլորին մենք կարողացանք 1990 թվականի մեջ ամպերը ճեղքել և լուսավոր աստղեր փնտրել երկնքում և դրանով մխիթարել մեր տառապած ժողովուրդը և մենք զմեզ։ Հայաստանյայց Եկեղեցու համար հատկապես 1990 թվականը նոր ճիշի և նոր աշխատանքի, նոր լարումի և նոր նպատակի մի տարի եղավ։ Հայոց Հայրապետը գնաց մինչև Բրյուսել՝ այնտեղ օծումը կատարելու նորահաստատ հայկական եկեղեցու։ Սա նաև Հայաստանյայց Եկեղեցու կյանքում նոր եղբայրության, սիրո մի շունչ է, որով Եկեղեցին իր կորցրած միությունը վերստին փորձեց գտնել և վերակերպվել, վերազարթոնք ապրել։ Մենք պետք է կարողանանք նպաստել, որ վիրավոր Հայաստանը կարողանա վերքերը բուժել և նոր վերքերին սպեղանի գտնել։ Բայց նաև 1990 թվականը հայ ժողովրդի պատմության մեջ հատկանշական տարի եղավ, որովհետև օգոստոսի մեր ազատ, անկախ հանրապետության հայտարարությունը կատարվեց։ Ամբողջ հայ ժողովրդի պատմության ընթացքին, հավանաբար, այսքան գոտեպնդող, միական և գեղեցիկ մի շրջան չէր եղել։

Մենք գիտենք, թե ինչպիսի հարևաններ ունենք և ինչպիսի դժվարին տնտեսական պայմաններ են սպասում մեզ, ակամա մտահոգությունը գալիս է ծանրանալու մեր ուսերի վրա և մեզ պարտադրում է, որ լինենք ավելի

խոհուն, ավելի հեռատես, ավելի զգայուն: Մի՞թե մեր կյանքն է միայն այս ձևով դասավորված, ամբողջ աշխարհ է, որ տակն ու վրա է, փոթորկոտ է: Այս բոլորով հանդերձ մենք պետք չէ հուսահատվենք, մենք միշտ էլ դժվարության միջից պետք է լուսավոր հորիզոնը փնտրենք և այդ լուսավոր հորիզոնն է, որ մեզի համար նպատակ դառնա:

Դուք, Վեհափառ Տեր, Ձեր առաջացած տարիքին երիտասարդական ավյունով և կորովով հանձն առիք ամեն տեսակ դժվարություն և կարողացաք մեր ժողովրդին և՛ նյութական օժանդակություն հասցնել, և՛ բարոյական ուժ ներշնչել: Մեր երկիրն ավելի քան երբեք կարիքն ունի միասնության, աշխարհի ոչ մի երկիր այսօր չի կարող իր գոյությունը կղզիացած պահել, եթե ոչ ամբողջական համահավասար իր ընտանիքի անդամ լինելով իր գոյությունը պահել: Եվ մենք ձգտում ենք այդ ընտանիքին, որ տիպար մեկ պատկերը լինի եվրոպական երկրների:

Վեհափառ Տեր, 1990 թ. ավարտին և նոր տարվա նախաշեմին պիտի աղոթենք, որ Աստված Ձեզի երկար կյանք տա, որպեսզի հովվեք մեր հավատացյալ ժողովրդին և մեզ առաջնորդեք, որպեսզի 1991 թվականը լինի մեզի համար հաջողության տարի, մեր վերքերի համար՝ բուժման տարի, մեր իդեալների համար՝ իրագործման տարի, թող Աստված երկար կյանք տա Ձեզ, և Մայր Աթոռի միաբանությունը իր զինվորյալ միաբաններով ձեռք-ձեռքի տված Ձեր կողքից անպակաս լինեն՝ Ձեզ զորավիգ կանգնելու համար»:

Սրբազան հոր խոսքից հետո, հոգևոր ճեմարանի երգչախմբի կատարմամբ հնչում են «Աստուծածին երկնային» և «Ծառագայթ և Կերպարան» շարականները:

Ապա Գ լսարանի ուսանող Օնիկ Սողբաթյանի մենակատարությամբ և երգչախմբի ընկերակցությամբ հնչում է «Տեր կեցո» երգը:

Այնուհետև ներկաներին իր օրհնության ու շնորհավորանքի խոսքն է ասում Վեհափառ Հայրապետը.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ
ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆԸ

Ծարունակելով մեր սիրելի Ներսես արքեպիսկոպոսի խոսքը, ես նախ ուզում եմ իմ օրհնությունը բերել ձեզ բոլորիդ, որ գտնվում եք այստեղ մեր այս համեստ սեղանի շուրջ: Կուզեմայի երկու խոսք ասել հատկապես մեր երիտասարդ միաբաններին, ուսանողներին ուղղյալ:

Ժամանակի մասին խորհրդածություններ անելու պատեն առիթ է անշուշտ Նոր տարին: Այսօր էլ խոսք առնողներից ոմանք որոշ խորհրդածություններ արեցին որոնք տեղին էին բնականաբար: Տակավին շատ կարելի էր խոսել ժամանակի գաղափարի մասին՝ տարբեր տեսանկյուններից մոտենալով, գիտության, փիլիսոփայության, կրոնական և այլն: Ես կուզեմայի այսօր կանգ առնել մեկ հարցումի վրա, որ ուղղյալ է ձեզ՝ երիտասարդներին: Մի պահ թողնենք մի կողմ գիտական, փիլիսոփայական խորհրդածությունները և հարց տանք թե ինչպե՞ս պիտի ապրենք, ինչպես դո՛ւք պիտի ապրեք ձեր ժամանակը: Կարծում եմ որ կարևոր հարցում է այս և ավելի կարևոր է անշուշտ ձեր պատասխանը: Մարդու առջև հոգևոր և բարոյական իմաստով միշտ այս հարցումն է, թե ինչպես ենք մենք ապ-

րում մեր ժամանակը, որովհետև ժամանակը կարելի է տարբեր ձևերով ապրել: Եթե մի պահ մտածեք, կարող եք անդրադառնալ, թե ինչ ձևերով կարելի է ժամանակը ապրել, թե՛ մարդիկ այս աշխարհի վրա, թե՛ մեր հայրենիքում: Մեզ շրջապատող մարդկանց շարքերում նույնիսկ երբեմն տեսնում ենք թե ինչքան վատ կերպով ապրում են իրենց ժամանակը: Այդ վատը չեմ ուզում մանրամասնել, որովհետև այս վատի տարբեր ձևերը կան և կերպերը, հնարավորությունները: Բայց ես կուզեի որ դուք լրջությամբ ընդունեիք այս հարցումը, դուք երիտասարդներդ, որոնք պատրաստվում են հոգևոր կյանքի ճանապարհով ընթանալու, հավատքով առ Աստված, հավատալով Քրիստոսի Սուրբ Ավետարանի համամարդկային, տիեզերական բարոյական պատգամներին: Հավատալով մեր Առաքելական Մայր Եկեղեցու առաքելության, հավատալով մեր ժողովրդի կենդանի ուժերին, հավատալով մեր առատ ու լուսավոր ապագային իբրև ազգություն, իբրև հայրենիք: Ահա այս հարցումով պիտի մոտենաք ձեր կյանքին այսօր, երբ Նոր տարվա սեմին եք գտնվում: Պատրաստվեք այդ ճանապարհով ընթանալուն, որպեսզի արժևորվի ձեր ժամանակը, իզուր տեղը չապրեք այս աշխարհի վրա, իզուր տեղը չապրեք այս հողի վրա: Զեզանից ամեն մեկը կոչված է ինչ որ չափով իր նպաստը, իր լուծանքները մեր այս ընդհանուր փափագների իրականացման ճանապարհին: Այլապես իզուր տեղը կլինեք այստեղ և իզուր տեղը կկոչվեք հոգևորական: Ահա այս գիտակցությամբ ես կրկին այս հարցումն եմ տալիս և սպասում եմ, որ դուք պատասխանեք իմ հարցումին ոչ թե խոսքով, այլ ձեր կենդանի գործերով: Ինչպես ապրել ժամանակը: Աստված ձեզ օգնական և կրկին մեր բարի մաղթանքները բոլորիդ: Թող Տերը անասան պահի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, թող Տերը անշարժ և Արարատի նման անշարժ պահի մեր վիրավոր ժողովուրդը, մեր Մայր Հայրենիքը և այս բոլոր դժվարությունների մթնոլորտում երբեք չհուսահատվենք, երբեք չտկարանանք և հույսով լեցուն, հավատքով լեցուն սպասենք նոր առավոտներին ինչպես վերջանում էր Վարուժանի նշանավոր, հույակապ բանաստեղծությունը.

«Մենք զավակների օգոստափառ,
Պիտի կերտենք նոր արշալույս»:

Այս հավատքով, այս ուխտով բանանք դռները նոր տարվա՝ Աստուծո օրհնությամբ. Ամեն:

Ամանորյա գեղեցիկ հանդիսության ավարտին, բոլոր ներկաները միաբերան երգում են «Հայրապետական մաղթերգը», աղոթելով Աստծուն՝ «երկար կյանք» ու «երկար օրեր» Հայոց Հայրապետին:

Ուրախ երեկոն ավարտվեց Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայր մեր»-ով:

Կեսգիշերին Մայրավանքի զանգերի խորհրդավոր դողանքները ազդարարում են հին տարվա ավարտը և նոր 1991-րդ տարվա գալուստը: